

## **Incal v Turkey, 1998 Application No. 22678/93, Ինքալն ընդդեմ Թուրքիայի, 1998թ., (Մարդու իրավունքների եվրոպական դատարան)**

Թեմա: Այլ բովանդակային սահմանափակումներ, լրատվամիջոցների կարգավորում, ընդհանուր հարցեր

Ենթաթեմա: աստելության քարոզչություն, հասարակական կարգ, առգրավում և արգելքներ

Թեսթը: անհրաժեշտությունը, արտահայտվելու ազատության իրավունքի կարևորությունը

Սանկցիան: ազատագրվում և այլ

Վճիռ: Արտահայտվելու ազատության իրավունքի խախտում, միաձայն

Իրավասություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Թուրքիա

### **Գործի փաստական հանգամանքները.**

Դիմումատուն Ժողովրդական աշխատավորական կուսակցության գործադիր խորհրդի անդամ է եղել: Խորհուրդը որոշել է բաժանել բուկլետներ Իզմիրի շրջանում, որոնցով կոչ էր արվում այդ շրջանում ստեղծելու կոմիտեներ քաղաքից քրդերին վտարելու պետական քաղաքականությանը դիմադրելու համար: Խորհուրդը դիմել է պաշտոնական թույլտվություն ստանալու համար համապատասխան բուկլետները բաժանելու նպատակով: Դրա արդյունքում, որոշում է կայացվել առգրավել բուկլետների բոլոր օրինակները այն հիմքով, որ դրանք պարունակում էին սեպարատիստական քարոզչություն, որն ունակ էր բնակչությանը խթանել Կառվարությանը դիմադրությանն ու հանցագործությունների կատարմանը: Դիմումատուի և Խորհրդի մյուս անդամների դեմ հարուցվել են քրեական գործեր: Դիմումատուն մեղավոր է ճանաչվել աստելություն քարոզելու փորձի, թշնամանք սերմանելու մեջ ռասիստական արտահայտությունների համար և դատապարտվել էր վեց ամսվա և քսան օրվա ազատագրկման: Այս դատապարտման արդյունքում նրան արգելվել է քաղաքացիական ծառայություն իրականացնել, ինչպես նաև մասնակցել քաղաքական կազմակերպությունների, արհմիությունների գործունեության մի շարք տեսակներին:

### **ՄԻԵԴ-ի վերլուծությունն ու եզրակացությունը**

**Հասարակական կարգ**

Դիմումատուի արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ միջամտություն է դրսևորվել, այդ միջամտությունը նախատեսված էր օրենքով և հետապնդում էր իրավաչափ նպատակ, մասնավորապես, անկարգությունների կանխարգելումը:

### **Արտահայտվելու ազատության իրավունքի կարևորությունը**

«Արտահայտվելու ազատությունը, երաշխավորված 10-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ, ժողովրդավարական հասարակության էական հիմնասյուններից է եւ նրա առաջընթացի, ինչպես նաեւ յուրաքանչյուր անհատի ինքնադրսւեւորման հիմնական պայմաններից մեկը: Պայմանով, որ այն համապատասխանում է 2-րդ պարբերության սահմանափակումներին, այս ազատությունը կիրառելի է ոչ միայն այնպիսի «տեղեկությունների» կամ «գաղափարների» նկատմամբ, որոնք բարյացակամորեն կամ անտարբերությամբ են ընդունվում կամ համարվում են անվնաս, այլեւ այնպիսիների, որոնք վրդովեցուցիչ, ցնցող կամ անհանգստացնող են: Դա է բազմակարծության, հանդուրժողականության եւ լայնախոհության թելադրանքը, առանց որի չկա «ժողովրդավարական հասարակություն»:

Լինելով շատ արժեքավոր բոլորի համար, այն հատկապես կարևորվում է քաղաքական կուսակցությունների համար և նրանց ակտիվ անդամների համար: Նրանք ներկայացնում են իրենց ընտրողներին, ուշադրություն են հրավիրում նրանց մտահոգությունների վրա և պաշտպանում են իրենց շահերը: Հետևաբար, միջամտությունը քաղաքական գործչի արտահայտվելու ազատության իրավունքին, որը ընդդիմադիր կուսակցության անդամ է, ինչպես որ տվյալ գործով դիմումատուն է, պետք է ենթակա լինի ավելի խիստ ստուգման Եվրոպական դատարանի կողմից:

Դատարանը պետք է քննարկի բուկլետի բովանդակությունը, որպեսզի որոշի, թե արդյոք այն արդարացնում էր Ինքալի մեղադրական դատավճիռը: Իր վերահսկողական դերն իրականացնելիս ՄԻԵԴ-ը նպատակ չունի զբաղեցնել իրավասու ներպետական մարմինների տեղը. այն լոկ վերանայում է նրանց կողմից ընդունված որոշումները իրենց գնահատողական իրավասությանը համապատասխան: Այն իրականացնելիս , Դատարանը պետք է բավարարված լինի նրանով, որ ներպետական դատարանները իրենց որոշումները հիմնել են համապատասխան փաստերի ընդունելի գնահատականի վրա:

Ազգային անվտանգության ներպետական դատարանը գտել է, որ Պետությունը բնութագրելով որպես ահաբեկիչ, տարբերակում կատարելով քաղաքացիների միջև, թեև բոլորը թուրքական ազգության են, և քննադատելով որոշակի տեղական միջոցառումները, որպիսիք են օրինակ գործողությունները հատուկ պատերազմում, բուկլետի հեղինակները գիտակցաբար քարոզել են մարդկանց ատելություն և թշնամանք, և այդ նպատակով նրանց խթանել են դիմել անօրինական մեթոդների:

Եվրոպական դատարանը նշեց, որ բուկլետի համապատասխան պարբերությունները քննադատում էին որոշ մունիցիպալ և վարչական միոցառումներ, որոնք ձեռնարկվել են իշխանությունների կողմից , մասնավորապես փոխոցային առևտրականների դեմ: Այսպիսով, դրանցով տեղեկատվություն էր տրվում իրական իրադարձությունների

վերաբերյալ, որոնք Իզմիրի բնակչության համար որոշակի հետաքրքրություն էին ներկայացնում:

Բուկլետի բովանդակությունը սկսվում է գանգատ ներկայացնելով այն թշնամանքի մթնոլորտից, որը ձևավորվել է քրդական ծագում ունեցող քաղաքացիների նկատմամբ Իզմիրում, և նշվում էր, որ ձեռնարկվող միջոցները ուղղված էին հատկապես նրանց դեմ՝ քաղաքը լքելուն հարկադրելու նպատակով: Տեքստը պարունակում էր նաև մի շարք սուր նկատառումներ Թուրքական կառավարության քաղաքականության մասին և լուրջ մեղադրանքներ էր առաջադրում, որոնցով այն պատասխանատու էր համարվում ստեղծված իրավիճակի համար: Դիմելով բոլոր «ժողովրդավարական հայրենասերներին»՝ այն բնութագրում էր պետության գործողությունները որպես ահաբեկչություն և որպես «հատուկ պատերազմի մաս», որը տարվում էր պետությունում քուրդ բնակչության դեմ: Այն կոչ էր անում քաղաքացիներին «ընդդիմադրել» այդ իրավիճակի դեմ մասնավորապես «հարևանության կմիտենների միջոցով»:

Դատարանը տեսնում է այս արտահայտություններում ի թիվս այլոց, կոչ ուղղված քրդական ծագում ունեցող քաղաքացիներին, խթանելով նրանց միավորվել՝ որոշակի քաղաքական պահանջներ բարձրացնելու նպատակով: Թեև հղումը «հարևանության կոմիտեներին» անորոշ է, այնուամենայնիվ, այդ կոչերը չեն կարող ամբողջական համատեքստում դիտվել որպես բռնության, թշնամանքի կամ ստելության քարոզչություն քաղաքացիների միջև: Դատարանը արդեն նշել է այլ հանգամանքներում, որ չի կարող բացառվել, որ նման տեքստը կարող է քողարկել այն նպատակները և մտադրությունները, որոնք տարբեր են դրանում ուղղակիորեն նշված նպատակներից: Այնուամենայնիվ, քանի որ չկա որևէ ապացույց, որևէ կոնկրետ գործողության, որը կարող է հերքել հայտարարված նպատակի անկեղծությունը, Դատարանը պատճռ չի տեսնում կասկածի տակ դնելու այն:

Այսպիսով, մնում է այն հարցը, թե արդյոք դիմումատուին դատապարտելը կարող է անհրաժեշտ համարվել ժողովրդավարական հասարակությունում, այսինքն, արդյոք այն բխել է ճնշող հասարակական կարիքից և համաչափ է եղել հետապնդվող իրավաչափ նպատակին:

Քաղաքական բանավեճի ազատությունը անկասկած բացարձակ չէ իր բնույթով: Մասնակից պետությունը կարող է այն որոշակի սահմանափակումների կամ սանկցիաների ենթարկել, բայց Եվրոպական դատարանն է, որ պետք է վերջնական որոշում կայացնի նման միջոցների համապատասխանության վերաբերյալ արտահայտվելու ազատության իրավունքին, որը սահմանված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով:

Սույն գործով Կառավարությունը վկայակոչել է այն «պարտականությունները» և «պատասխանատվությունը», որոնց հետ 10-րդ հոդվածը կապում է արտահայտվելու ազատության իրավունքի իրականացումը: Այնուամենայնիվ, դրանք չեն ազատում պետությանը պարտականությունից ապահովելու, որ միջամտությունը

համապատասխանում է 10-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին: Թույլատրելի քննադատության շրջանակները ավելի լայն են կառավարության նկատմամբ, քան մասնավոր անձի և նույնիսկ քաղաքական գործչի նկատմամբ: Ժողովրդավարական համակարգում կառավարության գործողություններն ու բացթողումները պետք է խիստ ուշադրության կենտրոնում լինեն ոչ միայն օրենսդիր և գործադիր իշխանությունների կողմից, այլև հասարակության: Հետևաբար, կառավարության գերիշխող դիրքը, որն այն զբաղեցնում է անհրաժեշտ է դարձնում նրա կողմից զսպվածությունն ցուցաբերելը քրեական գործի հարուցմանը դիմելիս, հատկապես, երբ առկա են այլ միջոցներ նրա ընդդիմադիրների չարդարացված քննադատություններին ու հարձակումներին հակադարձելու համար: Այնուամենայնիվ, պետության իրավասու մարմինների համար բաց է մնում համապատասխան միջոցների ձեռնարկումը, նույնիսկ քրեաիրավական բնույթի, որպես հասարակական կարգի երաշխավորների, որոնք նպատակաուղղված են համապատասխան ձևով արձագանքելու նման արտահայտություններին:

Սույն գործով Կուսակցության գործադիր խորհուրդը դիմել է տեղական կառավարման մարմնին ներկայացնելով համապատասխան բուկլետը այն տարածելու թույլտվություն ստանալու համար: Անվտանգության ոստիկանությունը, որը ուղումնասիրել է բովանդակությունը, համարել է, որ բուկլետը կարող է համարվել որպես սեպարատիստական քարոզչություն: Այս փուլում իշխանությունները կարող էին պահանջել փոփոխություններ կատարել բուկլետում, այնուամենայնիվ, դիմելու հենց հաջորդ օրը բուկլետները առգրավվեցին և քրեական հետապնդում սկսվեց նրանց հեղինակների նկատմամբ, այդ թվում Ինքալի նկատմամբ: Դատարանը նշում է վիճարկվող միջամտության ռադիկալ բնույթը: Դրա կանխարգելիչ ասպեկտն ինքն իրեն խնդիրներ է առաջացնում 10-րդ հոդվածի ներքո: Իզմիրի Ազգային անվտանգության դատարանը դատապարտեց դիմումատուին վեց ամսվա և քսան օրվա ազատազրկման և մեծ չափով տուգանքի: Որպես հետևանք, “հասարակական կարգին” առնչվող հանցագործության համար դատապարտման արդյունքում Ինքալը այլևս չէր կարող ներգրավվել քաղաքացիական ծառայությունում, ինչպես նաև մասնակցել քաղաքական կազմակերպությունների, արհմիությունների մի շարք գործունեություններում:

Որպեսզի հիմնավորվի “ճնշող հասարակական կարիքի” գոյությունը, որը կարդարացներ այն եզրակացությունը, որ վիճարկվող միջամտությունը համաչափ էր հետապնդվող իրավաչափ նպատակին, Կառավարության ներկայացուցիչը նիստին պնդեց, որ “ակնհայտ էր բուկլետի տեքստից, որ ”նրանք խթանում էին ըմբոստություն մի էթնիկական խմբի կողմից պետական իշխանությունների դեմ:” Հետևաբար, պետության պարտականությունն էր հանդիսանում կանխարգելելու ցանկացած փորձ ատելություն քարոզելու միջոցով խթանելու ահաբեկչական գործողություններ, հաշվի առնելով, այն, որ ահաբեկչությունը կանխարգելելու շահը գերակա է ժողովրդավարական հասարակությունում: Որոշ զինված խմբեր, ինչպիսիք են օրինակ ՊԿԿ-ն բարձրացրել է իր արդյունավետությունը քարոզչությունը քողարկելով արտահայտվելու ազատությամբ:

Դատարանը պատրաստ է հաշվի առնել իրեն ուղղված գործերի նախապատմությունը, հատկապես, ահաբեկչության կանխարգելման հետ կապված խնդիրները: Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ տվյալ գործի հանգամանքները նման չեն օրինակ Ջանախի գործի հանգամանքներին: Այստեղ, դատարանը չի տեսնում որևէ բան, որը կհիմնավորեր այն եզրակացությունը, որ Ինքալը որևէ ձևով պատասխանատու էր ահաբեկչության հետ կապված խնդիրների համար Թուրքիայում, և մասնավորապես, Իզմիրում: Պետք է նշել, նաև, որ նույնից Իզմիրի Ազգային անվտանգության դատարանը չընդունեց դատախազության փաստարկը, որ այս գործով կիրառելի է Ահաբեկչության կանխարգելման օրենքը:

Եզրակացնելով, Դատարանը գտավ, որ Ինքալի դատապարտումը անհամաչափ էր հետապնդվող նպատակին, և հետևաբար, անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակությունում:

Տեղի է ունեցել 10-րդ հոդվածի խախտում: